



Միսաք Մեծարեւնց

Աքասիաներու շուքին տակ

Ծաղիկներէն յուշիկ թերթեր կը թափէ
Բուրումներով օծուն հովիկն իրիկվա
Հոգիներուն կ'իջնէ երազ մը բուրեան,
Ի՛նչ հեշտին է մըթնշաղն այս սաղափէ:

Աքասիաներ, գինով լույսէ ու տապէ,
Օրորվելով մաքուր շունչ մը կը հեւան.
Մինչ կը ձյունէ ծաղիկն իրենց հոտեւան՝
Ջոր խօլաբար հովը գրկել կը շտապէ:

Ու լույսն անոնց, անխօս հուրի՛ դիտութեան
Հըմայագեղ ու վարսքերով արծաթէ,
Շատրըւանին կ'իջնէ գոռին մէջ կաթէ:

Ջուրը ցայտքէն ծաղիկ ծաղիկ կը կաթէ.
Վըճիտ, ինչպէս լույսէ արցունքը մանկան
Նըվագն անոր կը հեծեծէ հեշտական:

Ծաղիկներէն հովը թերթեր կը թափէ . . . :